



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԿԱԼՅԱԿԻՆՆԵՐՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգադ թիվ 66654/12)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

4 հուլիսի 2023թ.

Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Կայակիներն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),
հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Անյա Սիբերտ Ֆուա [Anja Seibert-Fohr]՝ *Նախագահ,*

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Անա Մարիա Գեռա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ,*

եւ Վալենտին Նիկոլեսկու [Valentin Nicolescu]՝ *Բաժանմունքի քարտուղարի
տեղակալի պաշտոնակատար,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածին համապատասխան Ռուսաստանի Դաշնության երկու քաղաքացիներ տկն Ելենա Կայակինայի (առաջին դիմումատու) եւ տիկին Վերա Կայակինայի (երկրորդ դիմումատու) (միասին՝ դիմումատուներ) կողմից, ծնված համապատասխանաբար 1962 եւ 1983 թվականներին, որոնց ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն S. Խուրշուդյանը, ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2012 թվականի սեպտեմբերի 30-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 66654/12),

Հայաստանի կառավարությանը (Կառավարություն), որին ներկայացրել է Կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ հետագայում՝ Միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը, դիմումատուների գույքի բռնագրավման վերաբերյալ բողոքների մասին ծանուցելու եւ գանգատը մնացած մասով անընդունելի հայտարարելու մասին որոշումը,

կողմերի դիտարկումները,

2023 թվականի հունիսի 13-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԳՈՐԾԻ ԱՌԱՐԿԱՆ

1. 2008 թվականի հուլիսի 22-ին ոստիկանությունը մարդու թրաֆիքինգի առնչությամբ քրեական վարույթ է հարուցել դիմումատուներ՝ ծնունդով Ռուսաստանից մոր եւ դստեր դեմ: Նրանք կասկածվում էին Ռուսաստանից Հայաստան մի շարք երիտասարդ կանանց բերելու մեջ, որոնք այնուհետեւ շահագործվում էին որպես ստրիպ պարուհիներ Հայաստանի տարբեր գիշերային ակումբներում:

2. Նրանցից առգրավվել է հետեւյալ գույքը. երկու համակարգիչ, կիսանկուղային հարկ Երեւանում, որը գնվել է առաջին դիմումատուի կողմից, նրա կողմից հայկական բանկում ներդրված 12 500 000 հայկական դրամի (<< դրամ) չափով ավանդ, 1 150 000 ՀՀ դրամ կանխիկ գումար, ԱՄՆ դոլարի 3 թղթադրամ, իրանական Ռիալի 10 000-անոց 5 թղթադրամ, երկու ոսկե վզնոց, ոսկե ականջօղեղ, 15 530 ՀՀ դրամ եւ 129 ռուսական ռուբլի կանխիկ գումար: Առգրավվել են նաեւ երկրորդ դիմումատուի կողմից հայկական բանկում ներդրված 6 500 000 ՀՀ դրամի ավանդը եւ 110 կտոր զարդ՝ պահված անվտանգ պահատուփում՝ Հայաստանի մեկ այլ բանկում: Այս ամբողջ գույքն ընդունվել է որպես իրեղեն ապացույց:

3. Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանում (Վարչական շրջանի դատարան) դատավարության ընթացքում մեղադրողը դիմումատուներին մեղադրանք է առաջադրել ծանրացնող հանգամանքներով մարդու թրաֆիքինգի եւ փողերի լվացման համար՝ փոփոխված Քրեական օրենսգրքին համապատասխան (ՔՕ):

4. Առաջին դիմումատուն ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը շահույթ էր ստացել Ռուսաստանում գործող իր բիզնեսից եւ Հայաստանում՝ ակումբում որպես մենեջեր աշխատելու ժամանակ, իսկ երկրորդ դիմումատուն, *inter alia* (ի թիվս այլնի), ցուցմունք է տվել այն մասին, որ ինքն աշխատել էր գիշերային ակումբներում նույն պայմաններով, ինչ մյուս աղջիկները, եւ որ ինքը վաստակում էր մյուսներից

ավելի շատ: Ինչպես մյուս աղջիկների դեպքում էր, հաճախորդներն իրեն որպես նվեր տվել էին զարդեր. նա զարդերից որոշները գնել էր իր վաստակած գումարով, իսկ որոշները մնացել էին իր տատիկից:

5. 2011 թվականի հոկտեմբերի 3-ին Վարչական շրջանի դատարանն առաջին եւ երկրորդ դիմումատուներին մեղավոր է ճանաչել ծանրացնող հանգամանքներով մարդու թրաֆիքինգի մեջ (տե՛ս ստորեւ՝ 14-րդ պարբերությունը)՝ դատապարտելով նրանց համապատասխանաբար 9 եւ 7 տարի ժամկետով ազատազրկման, եւ նրանց անմեղ է ճանաչել փողերի լվացման մասով: Այն հաստատված է համարել, որ 24 երիտասարդ կանայք, թրաֆիքինգի ենթարկվելով, Ռուսաստանից Հայաստան են տեղափոխվել եւ շահագործվել գիշերային ակումբներում, եւ նրանց վաստակած գումարը նրանցից վերցվել է: Ինչ վերաբերում է փողերի լվացման հետ կապված մեղադրանքներին, ապա մեղադրողին չի հաջողվել հիմնավորել, որ դիմումատուները մտադրություն են ունեցել թաքցնելու իրենց հանցավոր գործունեությունից ստացված արդյունքները. նրանք գույք էին ձեռք բերել եւ բանկային ավանդներ էին ներդրել իրենց անուններով, ինչը նշանակում էր, որ նրանք հանցավոր գործունեության մեջ էին ներգրավվել այդ եկամուտները ստանալու եւ օգտագործելու նպատակով: Այնուամենայնիվ, մեղադրողին չի հաջողվել պարզել եւ բացահայտել, թե մեղադրական եզրակացության մեջ հիշատակված որ գումարներն ու ակտիվներն էին ձեռք բերվել հանցավոր գործունեության միջոցով, եւ որոնք էին ձեռք բերվել օրինական ճանապարհով:

6. Վարչական շրջանի դատարանն առանց քննության է թողել 7 տուժողների կողմից ներկայացված՝ վնասների հատուցման մասով քաղաքացիական հայցն այն հիմքով, որ անհնար է եղել որոշել նրանց կրած իրական վնասի չափը՝ նշելով, որ նրանք հնարավորություն ունեին դատավարությունից հետո վնասի հատուցման պահանջ ներկայացնելու առանձին քաղաքացիական վարույթի շրջանակներում: Այն որոշել է, որ առաջին դիմումատուից առգրավված երկու համակարգիչները, գումարը եւ զարդերը պետք է

վերադարձվեն նրան, իսկ նրա բանկային ավանդը եւ անշարժ գույքը պետք է արգելանքից հանվեն: Պետք է արգելանքից հանվեն նաեւ երկրորդ դիմումատուի բանկային ավանդը եւ զարդերը:

7. Դիմումատուները վերաքննիչ բողոքներ են ներկայացրել՝ փորձելով հասնել լրիվ արդարացման:

8. Մեղադրողը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ փորձելով հասնել դիմումատուների դատապարտմանը նաեւ փողերի լվացման մասով՝ նրանց գույքի բռնագրավմամբ: Նա նաեւ պահանջել է, որ իրեղեն ապացույցների հարցը լուծվի Քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 119-րդ հոդվածի պահանջներին համապատասխան (տե՛ս ստորեւ՝ 16-րդ պարբերությունը)՝ պնդելով, որ դիմումատուներին չէր հաջողվել պարզաբանել որպես իրեղեն ապացույց ընդունված գույքի ծագումը: Հետեւաբար այդ գույքը ստացվել էր տուժողների շահագործման (նրանց վաստակածի) հաշվին եւ պետք է վերադարձվեր նրանց՝ ՔԴՕ-ի 119-րդ հոդվածին համապատասխան (նույն տեղում):

9. 2012 թվականի հունվարի 26-ին Վերաքննիչ քրեական դատարանը (Վերաքննիչ դատարան) մերժել է դիմումատուների դատապարտման եւ պատիժների մասով երկու վերաքննիչ բողոքները եւ բավարարել իրեղեն ապացույցների հարցի լուծման մասով մեղադրողի վերաքննիչ բողոքը՝ որոշելով, որ առգրավված իրեղեն ապացույցներն ամբողջությամբ պետք է փոխանցվեն որպես պետական սեփականություն՝ պատճառաբանելով հետեւյալը.

«Վերաքննիչ դատարանը, քննության առնելով մեղադրողների բողոքում իրեղեն ապացույցների տնօրինման մասով բերված պատճառաբանությունը, եկավ համոզման, որ այդ մասով բողոքը պետք է բավարարել՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 115, 119 հոդվածներով»: (ՔԴՕ, տե՛ս ստորեւ՝ 15-րդ եւ 16-րդ պարբերությունները):

10. Դիմումատուները ներկայացրել են վճռաբեկ բողոք: Նրանք պնդել են, *inter alia*, որ Վերաքննիչ դատարանը պատճառաբանություն չի ներկայացրել Վարչական շրջանի դատարանի որոշումն իրեղեն ապացույցների հարցի լուծման

մասով փոփոխելու վերաբերյալ: Մեղադրողը երբեմն չի պահանջել գույքի փոխանցում պետության տիրապետմանը: Այդպիսով, նրանք կամայականորեն զրկվել էին իրենց ամբողջ ունեցվածքից:

11. Մեղադրողը նույնպես բողոքարկել է:

12. 2012 թվականի մարտի 30-ին Վճռաբեկ դատարանը երկու վճռաբեկ բողոքներն էլ անընդունելի է համարել հիմքերի բացակայության պատճառով:

13. Դիմումատուները բողոքել են, որ իրենց գույքի բռնագրավումը տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջների խախտումով:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

I. ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (ՈՒԺԻ ՄԵՋ՝ ՄԻՆՉԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը)

14. Համապատասխան ժամանակահատվածում 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերը նախատեսում էին, որ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված մարդու թրաֆիքինգը կամ երկու կամ ավելի անձանց շահագործումը պատժվում է 7-12 տարի ժամկետով ազատազրկմամբ՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 տարի ժամկետով, կամ առանց դրա:

II. ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (ՈՒԺԻ ՄԵՋ՝ ՄԻՆՉԵՎ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը)

15. Համապատասխան ժամանակահատվածում 115-րդ հոդվածը նախատեսում էր, որ իրեղեն ապացույցները, *inter alia*, ներառում էին հանցավոր գործունեության օբյեկտները, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը:

16. 119-րդ հոդվածում շարադրված էին քրեական գործով վարույթն ավարտելիս իրեղեն ապացույցների հարցի լուծման հետ կապված կանոնները:

119-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն՝ հանցագործության գործիքները բռնագրավվում եւ հանձնվում էին համապատասխան պետական հիմնարկներին, իսկ արժեք չներկայացնելու դեպքում՝ ոչնչացվում: Արժեք չներկայացնող իրերը ոչնչացվում էին [օրենսդրությամբ սահմանված կարգով], իսկ շահագրգռված անձանց միջնորդության դեպքում կարող էին հանձնվել նրանց:

119-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված էր, որ դրամը, այլ արժեքներ եւ մյուս առարկաները, որոնք օրինական տիրապետումից դուրս էին եկել հանցագործության հետեւանքով, հանձնվում էին սեփականատերերին կամ նրանց իրավահաջորդներին:

119-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված էր, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, մյուս արժեքները եւ առարկաները դատարանի դատավճռով ուղղվում էին դատական ծախսերի հատուցմանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը, իսկ եթե հայտնի չէր վնաս կրած անձը, ապա որպես եկամուտ հանձնվում էին պետությանը:

ԴԱՏԱՐԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

17. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուները չեն սպառել իրենց հասանելի ներպետական իրավական պաշտպանության միջոցներն այն առումով, որ նրանք չէին օգտվել իրենց հնարավորությունից՝ ներկայացնելու պատասխան Վարչական շրջանի դատարանի դատավճռի դեմ մեղադրողի վերաքննիչ բողոքին:

18. Դիմումատուները նշել են, որ իրենք ներկայացրել էին իրենց փաստարկները Վերաքննիչ դատարանի նիստերի ժամանակ, իսկ Կոնվենցիայի համաձայն իրենց բողոքները բարձրացրել էին հետագայում ներկայացված վճռաբեկ բողոքում:

19. Դատարանը նշում է, որ մեղադրողի վերաքննիչ բողոքին պատասխան ներկայացնելը պաշտպանության կողմի իրավունքն է եւ ոչ թե պարտականությունը: Ավելին, Վերաքննիչ դատարանի 2012 թվականի հունվարի 26-ի որոշումը (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը) ենթակա էր հետագա բողոքարկման, ինչի հնարավորությունից դիմումատուները օգտվել էին՝ Վճռաբեկ դատարանում բարձրացնելով Կոնվենցիայի համաձայն իրենց բողոքներն այդ որոշման առնչությամբ (տե՛ս վերելում՝ 10-րդ պարբերությունը): Հետեւաբար Դատարանը մերժում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության առարկությունը:

20. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով ո՛չ ակնհայտորեն անհիմն է, ո՛չ էլ անընդունելի որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

21. Գույքի բռնագրավման վերաբերյալ ընդհանուր սկզբունքներն ամփոփ ներկայացված են Ջի.Այ.Ի.Էմ. Ս.Ռ.Լ.-ն եւ այլք ընդդեմ Իտալիայի [G.I.E.M. S.R.L. and Others v. Italy] գործում ([ՄՊ] [GC], թիվ 1828/06 եւ 2 այլ, §§ 289 եւ 292-293, 2018 թվականի հունիսի 28. տե՛ս նաեւ *Տոդորովը եւ այլք ընդդեմ Բուլղարիայի* [Todorov and Others v Bulgaria], թիվ 50705/11 եւ 6 այլ, §§ 179-199, 2021 թվականի հուլիսի 13՝ հանցագործությունից ստացված եկամուտների բռնագրավման ընդհանուր սկզբունքների ամփոփման համար):

22. Չի վիճարկվում այն, որ դիմումատուների գույքի բռնագրավումը համարվում էր միջամտություն նրանց իրավունքներին՝ համաձայն թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի:

23. Թեեւ ՔՕ-ի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերը (տե՛ս վերելում՝ 14-րդ պարբերությունը) նախատեսում էին գույքի բռնագրավման այլընտրանքային պատժատեսակ, դիմումատուները միայն ենթարկվել են ազատագրկման ձեռով պատժի (տե՛ս վերելում՝ 5-րդ եւ 9-րդ պարբերությունները), եւ նրանց գույքը բռնագրավվել է՝ հղում կատարելով ՔԴՕ-ի 119-րդ հոդվածին (տե՛ս վերելում՝ 2-րդ եւ 16-րդ պարբերությունները): Վերաքննիչ դատարանը չի նշել, թե ՔԴՕ-ի 119-րդ հոդվածի որ դրույթն է կիրառվել դիմումատուների գործով (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, մեղադրողի փաստարկներից (տե՛ս վերելում՝ 8-րդ պարբերությունը), որոնց հղում էր արվել որոշման մեջ, պարզ է դառնում, որ բռնագրավման միջոցը նպատակաուղղված էր քրեական իրավախախտման արդյունքները բռնագանձելուն:

24. Դատարանը ստիպված չէ վերջնականապես որոշել, թե թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի որ կանոնն է կիրառելի՝ հաշվի առնելով այն, որ արդարացման հարցը կարգավորող սկզբունքներն էապես նույնն են (տե՛ս վերելում հիշատակված՝ *Տոդորովը եւ այլք* գործը, § 182, հետագա հղումներով):

25. Վերաքննիչ դատարանը, բեկանելով Վարչական շրջանի դատարանի՝ դիմումատուներից առգրավված ակտիվների հարցի լուծման հետ կապված

որոշումը (տե՛ս վերելում՝ 5-րդ եւ 9-րդ պարբերությունները), չի նշել, թե ՔԴՕ-ի 119-րդ հոդվածի, որին ընդհանուր հղում էր կատարվել, կոնկրետ որ դրույթի վրա էր այն հիմնվել որոշում կայացնելիս այնպիսի իրավիճակում, երբ ՔԴՕ-ի 119-րդ հոդվածի որեւէ դրույթ չէր նախատեսում բռնագրավված իրեղեն ապացույցի անմիջապես փոխանցում պետության տիրապետմանը: Հետեւաբար դեռեւս պարզ չէ, թե ինչ իրավական հիմքով է Վերաքննիչ դատարանը որոշել, որ նախաքննության ընթացքում առգրավված՝ դիմումատուների ամբողջ գույքը պետք է փոխանցվեր պետությանն այն դեպքում, երբ մեղադրողը նման պահանջ չէր ներկայացրել (տե՛ս վերելում՝ 8-րդ պարբերությունը):

26. Այդ պատճառով Դատարանը դեռեւս կասկածում է՝ արդյոք բռնագրավման վիճարկվող միջոցը կարող է համարվել «օրենքով նախատեսված պայմաններով» կատարված: Այնուամենայնիվ, այն անհրաժեշտ չի համարում լուծել այդ հարցը, քանի որ վիճարկվող բռնագրավմամբ խախտվել է թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածն այլ պատճառներով (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Վիստինշը եւ Պերեպոլկինսն ընդդեմ Լատվիայի* [ՄՊ] [Vistiņš and Perepjolkins v. Latvia [GC]], թիվ 71243/01, § 105, 2012 թվականի հոկտեմբերի 25, եւ ստորեւ՝ 28-29-րդ պարբերությունները):

27. Դատարանը համոզված է, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավումը համապատասխանում է համայնքի ընդհանուր շահին, քանի որ անօրինական գործունեության միջոցով ձեռք բերված կամ հանցանքից ստացված արդյունքներով վճարված գումարի կամ ակտիվների բռնագանձումն անհրաժեշտ եւ արդյունավետ միջոց է՝ պայքարելու հանցավոր գործունեության դեմ (տե՛ս *Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի* [Raimondo v. Italy], 1994 թվականի փետրվարի 22, § 30, շարք Ա թիվ 281-Ա): Հետեւաբար այն շարունակում է քննության առնել, թե արդյոք արդարացի հավասարակշռություն պահպանվել է իրավաչափ նպատակի եւ դիմումատուների իրավունքների միջեւ, եւ արդյոք առկա են եղել բավարար դատավարական երաշխիքներ:

28. Հաշվի առնելով ՔԴՕ-ի 119-րդ հոդվածը, մասնավորապես՝ 1-ին մասի 4-րդ կետը, որը հատկապես վերաբերում է որպես իրեղեն ապացույց քրեական վարույթ ընդունված՝ քրեական իրավախախտումից ստացված արդյունքների հետ կապված հարցի լուծմանը, Դատարանը նկատում է, որ Վարչական շրջանի դատարանը վկայակոչել էր տուժողների քաղաքացիական հայցը դիմումատուների նկատմամբ, որը պետք է լուծվեր առանձին քաղաքացիական վարույթի շրջանակներում՝ դատավարության ավարտից հետո, մինչդեռ մեղադրողն ինքը հայտնել էր, որ այն իրեղեն ապացույցները, որոնք ըստ նրա ներառում էին բացառապես հանցանքից ստացված արդյունքներ, պետք է փոխանցվեին տուժողներին (տե՛ս վերելում՝ 6-րդ եւ 8-րդ պարբերությունները): Այն մասին որոշում կայացնելիս, որ իրեղեն ապացույցները պետք է փոխանցվեն պետության տիրապետմանը, Վերաքննիչ դատարանը հղում է կատարել մեղադրողի վերաքննիչ բողոքում պարունակվող փաստարկներին, սակայն իր կողմից ապացույցների որեւէ վերլուծություն չի ներկայացրել: Սա հատկապես ապշեցուցիչ է այն փաստը հաշվի առնելով, որ, ինչպես արդեն նշվել է, մեղադրողը չի պահանջել գույքի փոխանցում պետության տիրապետմանը, սակայն պնդել է, որ նշված ակտիվները ձեռք են բերվել տուժողների շահագործումից ստացված եկամտից եւ պետք է վերադարձվեն նրանց՝ ՔԴՕ-ի 119-րդ հոդվածին համապատասխան (ենթադրաբար ՔԴՕ-ի 119-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ուժով): Առավել ապշեցուցիչ է այն հանգամանքը, որ ամբողջությամբ անփոփոխ թողնելով Վարչական շրջանի դատարանի եզրահանգումները, ներառյալ՝ ակնհայտորեն այն եզրահանգումը, որ մեղադրողին չի հաջողվել բացահայտել, թե որպես իրեղեն ապացույց ընդունված որ ակտիվներն են ձեռք բերվել հանցավոր գործունեության արդյունքում, եւ որոնք՝ ոչ, Վերաքննիչ դատարանն առանձին գնահատում չի կատարել, թե որ գույքը պետք է բռնագրավվի (ի հակադրություն՝ տե՛ս Սիլիցկիենեն ընդդեմ Լիտվայի [Silickienė v. Lithuania], թիվ 20496/02, § 68, 2012 թվականի ապրիլի 10. տե՛ս նաեւ Ռումմին ընդդեմ Էստոնիայի [Rummi v. Estonia], թիվ 63362/09, § 108, 2015 թվականի հունվարի 15, եւ վերելում հիշատակված՝ *Տոդորովի եւ այլոց* գործը, § 213՝ վերջում):

29. Ի վերջո, չնայած Վերաքննիչ դատարանին չէր հաջողվել հարցի անկախ գնահատում իրականացնել, Վճռաբեկ դատարանն իր հերթին մերժել էր այդ որոշման դեմ դիմումատուների բողոքն ըստ էության քննելը (տե՛ս վերելում՝ 10-րդ եւ 12-րդ պարբերությունները)՝ այդպիսով ստեղծելով այնպիսի իրավիճակ, երբ բռնագրավման թե՛ օրինականության եւ թե՛ արդարացիության մասով որեւէ դատական վերանայում ի վերջո չի իրականացվել (համեմատի՛ր վերելում հիշատակված՝ *Սիլիցկիենեի* գործը, § 68):

30. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Դատարանը գտնում է, որ պատասխանող Կառավարությանը չի հաջողվել արդարացի հավասարակշռություն պահպանել գույքային իրավունքի պաշտպանության եւ ընդհանուր շահի միջեւ:

31. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

32. Որպես նյութական վնասի փոխհատուցում դիմումատուները պահանջել են 109 435 եվրո, որը կազմում է նրանցից բռնագրավված ակտիվների արժեքը: Դիմումատուները նաեւ միասին պահանջել են 4 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում: Նրանք որեւէ պահանջ չեն ներկայացրել ծախսերի եւ ծախքերի մասով:

33. Կառավարությունն այս պահանջները վիճարկել է:

34. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում հայտնաբերելիս Դատարանը նշել է, որ ներպետական դատարաններին չէր հաջողվել իրականացնել դիմումատուների գույքի բռնագրավման օրինականության եւ արդարացիության դատական պատշաճ վերանայում (տե՛ս վերելում՝ 28-29-րդ պարբերությունները): Դատարանը չի կարող ենթադրություններ անել

դատավարության հնարավոր ելքի վերաբերյալ այն պարագայում, երբ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջները պահպանվեին: Հետեւաբար այն համարում է, որ ներպետական վարույթի վերաբացումը եւ ազգային մակարդակով գործի վերաքննությունը, ինչի հնարավորությունն առկա է ներկայումս գործող Քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ըստ էության կազմում է պատշաճ միջոց՝ խախտումը վերացնելու համար (տե՛ս վերելում հիշատակված՝ *Տողորովի եւ այլոց* գործը, § 321, հետագա հղումներով): Հետեւաբար Դատարանը մերժում է նյութական վնասի փոխհատուցման պահանջը: Ավելին, Դատարանը համարում է, որ սույն վճռում ներկայացված իր եզրահանգումներն ինքնին բավարար արդարացի փոխհատուցում են դիմումատուների կրած ցանկացած ոչ նյութական վնասի համար, եւ հետեւաբար մերժում է այս մասով պահանջը:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է գանգատն ընդունելի.
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում.
3. Վճռում է, որ խախտում հայտնաբերելն ինքնին բավարար արդարացի փոխհատուցում է դիմումատուների կրած ոչ նյութական ցանկացած վնասի համար.
4. Մերժում է դիմումատուների՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2023 թվականի հուլիսի 4-ին՝
համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Վալենտին Նիկոլեսկու՝

Քարտուղարի տեղակալի պաշտոնակատար

Անյա Սիբերտ Ֆուա՝

Նախագահ